ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2010, 63, №3, 77-79

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՌՈԼԱՆԴ ԱՇՈՏԻ ՄԱՆԴԱԼՅԱՆ
(1933 - 2010)

Հայաստանի երկրաբանական գիտական հանրությունը ծանր կորուստ կրեց: 2010թ. նոյեմբերի 23-ին կյանքից անժամանակ հեռացավ ճանաչված գիտնական, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ռոլանդ Աշոտի Մանդալյանը:

Ռ.Մանդալյանը ծնվել է 1933թ.-ի հոկտեմբերի 5-ին Ախալցիխ քաղաքում (Վրաստան) զինծառայողի ընտանիքում: 1935թ.-ին Մանդալյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան: 1951թ.-ին Ռ. Մանդալյանը ավարտում է Երևանի Ձերժինսկու անվան դպրոցը և նույն թվականին ընդունվում Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, որն էլ հաջողությամբ ավարտում է 1956թ.՝ ստանալով ճարտարագետ-երկրաբանի որակավորում:

1956-1961թթ. նա աշխատում է որպես երկրաբան սկզբում "Հիդրոէներգոնախագիծ" գիտաարտադրական միավորման հայկական մասնաճյուղում, այնուհետև՝ ՀՀ Երկրաբանական վարչության տարբեր երկրաբանահետախուզական արշավախմբերում: Արդեն իսկ այդ տարիներին երիտասարդ մասնագետը աչքի է ընկնում գիտական աշխատանքի նկատմամբ իր ունեցած հետաքրքրասիրությամբ և ձիրքով:

1961թ. Ռ.Մանդալյանը ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրա՝ Մոսկվայի Երկրաբանա-հետախուզական ինստիտուտի (ՄԳՐԻ) պրոֆեսոր Մ.Ս.Շվեցովի ղեկավարությամբ: Ասպիրանտական ուսման տարիներին շփումը Մ.Ս.Շվեցովի հետ մեծապես նպաստեցին Ռ. Մանդալյանի մասնագիտական հմտության և գիտական մտածելակերպի ձևավորմանը:

1966թ Ռ.Մանդալյանը Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն "Հյուսիսային Հայաստանի վերին յուրայի հասակի նստվածքների լիթոլոգիան" թեմայով և ստանում երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հետագայում, մինչև իր կյանքի վերջը, Ռ.Մանդալյանը անընդմեջ աշխատում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ռեգիոնալ երկրաբանության և լիթոլոգիայի բաժնում, սկզբում որպես կրտսեր, 1971թ.-ից՝ որպես ավագ, այնուհետև՝ առաջատար գիտաշխատող: Իր

երկարամյա և բեղուն գիտական գործունեության ընթացքում նա լայնածավալ և մանրակրկիտ հետազոտություններ է կատարում Հյուսիսային Հայաստանի, Վայքի, Սյունիքի և մասամբ՝ Արցախի տարածքներում, ուսումնասիրում է այդ շրջանների վերին յուրայի և ստորին կավճի հասակների կարբոնատային և հրաբխա-նստվածքային ապարների լիթոլոգիական կազմը և նստվածքակուտակման առանձնահատկությունները:

Մեծածավալ փաստացի նյութերի գիտական բազմակողմանի վերլուծության համալիր արգասիքը եղավ 1989թ. Ռ.Մանդալյանի՝ Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտական խորհրդում փայլուն կերպով պաշտպանված "Հայաստանի վերին յուրա-նեոկոմի (Փոքր Կովկաս) հրաբխա-նստվածքային սեդիմենտոգենեզը և լիթոգենեզը" դոկտորական ատենախոսությունը, որն արժանացավ մի շարք խոշոր մասնագետների բարձր գնահատականին: Այդ ատենախոսության լրամշակված տարբերակը տպագրվեց ստվարածավալ մենագրության տեսքով (1990թ), որում բացի բուն լիթոլոգիական խնդիրներից, մեծ ուշադրություն է դարձվում նաև հնաշխարհագրական պայմանների վերականգնմանը և ոչ մետաղային օգտակար հանածոների (դոլոմիտներ, մարմարացված կրաքարեր, սիլիցիտներ) ծագումնաբանական առանձնահատկություններին և օգտագործման հնարավոր հեռանկարներին: Աշխատանքը մինչ օրս ինչպես Հայաստանի, այնպես էլ Ալպ-Հիմալայան ծալքավոր գոտու հարակից շրջանների համար չի կորցրել իր կարևոր գիտական նշանակությունը: Ռ.Մանդայանն առաջիններից էր, որ հանգամանալից կերպով հետազոտել է Տավուշի և Սյունիքի մարզերի յուրա-կավճի հասակի գոյացումներում կարբոնատային կարստի առաջացման և զարգացման առանձնահատկությունները և տվել կարստի՝ որպես երկրաբանական վտանգավոր երևույթի, գնահատականը: Հարկ է նշել, որ նրա կողմից իրականացված ուսումնասիրությունները չեն սահմանափակվել միայն լիթոլոգիայի հետ առնչվող խնդիրներով: Դրա վկայությունն են նրա հետազոտությունները՝ նվիրված Դիլիջանի շրջակայքի այրվող թերթաքարերի կազմաբանության և առաջացման պայմանների բացահայտմանը, պլիոցեն-չորրորդական հասակի տրավերտինային դաշտերի ծագումնաբանական բարդ և բազմաբովանդակ հարցերին:

Արցախի ազատագրումից հետո Ռ.Մանդալյանը առաջիններից էր, ով սկսեց ուսումնասիրել Արցախի տարածքի երկրաբանության որոշ հարցեր, մասնավորապես՝ վերին յուրայի կարբոնատային ֆորմացիաների լիթոլոգիական և իսլանդական սպաթի առաջացման ծագումնաբանական առանձնահատկությունները:

Մեծ է նաև Ռ.Մանդալյանի ավանդը Հայկական լեռնաշխարհի երկրաբանական գիտության պատմության ուսումնասիրման բնագավառում: Նրա գրչին են պատկանում երկրաբանության խոշորագույն ռահվիրաներ Հ.Աբիխի, Ն.Կարակաշի, Լ.Վարդանյանցի գիտական գործունեությանը նվիրված մի շարք հոդվածներ:

Ռ.Մանդալյանը 3 մենագրության, մոտ 60 գիտական հոդվածների, 12 ձեռագիր հաշվետվությունների հեղինակ և համահեղինակ է:

Աշխատանքներ, որոնք լայն ճանաչում են գտել Հայաստանի սահմաններից դուրս և արժանացել են լիթոլոգիայի ասպարեզում խոշորագույն մասնագետներ Վ.Ի.Մուրավյովի, Դ.Պ.Խրուշովի, Վրաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ.Վ.Թոփչիշվիլու և այլոց բարձր գնահատականին

2004-2009թթ ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում նա դասավանդել է "Լիթոլոգիա" և "Լիթոգենեզի երկրաքիմիա" առարկաները, փոխանցելով երիտասարդներին իր հարուստ փորձը և գիտելիքները:

Լինելով լայն մտահորիզոնի տեր անձնավորություն, Ռ.Մանդալյանը նաև դասական երաժշտության մեծ գիտակ էր: Նա հեղինակ է մի շարք գիտահանրամատչելի հոդվածների, որոնք նվիրված են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի օպերային երգիչների կենսագրություններին և գործունեությանը: Նրանցում բերված նորահայտ փաստերը զարմացնում էին նույնիսկ հմուտ երաժշտագետներին:

Ռոլանդ Աշոտի Մանդալյանը տաղանդաշատ, բազմակողմանի զարգացած մտավորական էր՝ հումորի յուրովի և նուրբ զգացողությամբ: Նա մեծ հարգանք էր վայելում գործընկերների շրջանում: Բազմավաստակ գիտնականի պայծառ հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին»
տեղեկագրի խմբագրություն